ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 9

ք. Երևան 22 դեկտեմբերի 2023 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԵՊՀ գիտական խորհրդի
2023 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 9 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

Կ Ա Ր Գ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ԵՊՀ) մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգն ու պայմանները:

Մագիստրոսական թեզն ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակության աշխատանք է, որը նպաստում է Որակավորումների ազգային շրջանակի համապատասխան մակարդակի, ինչպես նաև կրթական տվյալ ծրագրով նախատեսված կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Այն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու ու ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև գիտական խնդիրներ բարձրացնելու ու նոր լուծումներ առաջադրելու հմտությունները:

2. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի ավարտական պահանջներից է:

3. Մագիստրոսական թեզը մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումն ու պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 1-4-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 2-5-րդ կիսամյակներում (տե՛ս Հավելված 5 և 6):

4. Թեզի պատրաստման ու պաշտպանության համար կրթական ծրագրում (ըստ տևողության) նախատեսվում է 24, 18 և 12 կրեդիտ աշխատածավալ:

5. Մագիստրոսական թեզը կարող է համատեղ իրականացվել մասնագիտական տարբեր ոլորտների երկու տարբեր կրթական ծրագրերում սովորող ուսանողների կողմից (տե՛ս Հավելված 7):

6. Մագիստրոսի՝ 1 տարի տևողությամբ (60 ECTS) կրթական ծրագրերում թեզն ունի կիրառական ուղղվածություն:

II. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

7. Մագիստրոսական թեզերի թեմաներն ու գիտական ղեկավարները հաստատվում են ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդների կողմից և մուտքագրվում են էլեկտրոնային համակարգեր (SuperVision և e-learning.ysu.am)՝ համաձայն 5-րդ ու 6-րդ հավելվածներում ներկայացված ժամանակացույցների:

8. Թեզերի թեմաները կարող են առաջարկվել ինչպես ուսանողի, այնպես էլ կրթական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից՝ ելնելով տվյալ կրթական ծրագրի առանձնահատկություններից:

9. Մագիստրոսական թեզի վերնագիրը կարող է խմբագրվել մինչև ավարտական կիսամյակի մեկնարկը, եթե առկա է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի համապատասխան հիմնավորումը:

III. ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

10. Մագիստրոսական թեզի գիտական ղեկավար կարող է լինել ԵՊՀ ուսումնական ստորաբաժանման կամ տվյալ ոլորտի գիտական աստիճան ու կոչում ունեցող ՀՀ և օտարերկրյա մասնագետը:

11. Առանձին դեպքերում մագիստրոսական թեզ կարող են ղեկավարել համապատասխան մասնագիտական ոլորտի գիտական աստիճան չունեցող մասնագետներն ու դասախոսները, եթե առկա են ուսումնական ստորաբաժանման հիմնավորումն ու ԵՊՀ ուսումնական գործընթացները համակարգող պրոռեկտորի թույլտվությունը:

12. Մագիստրոսական թեզը կարող է ունենալ համաղեկավար: Մագիստրոսական թեզի համաղեկավար կարող է լինել ինչպես ԵՊՀ այլ ուսումնական ստորաբաժանման, այնպես էլ տվյալ ոլորտի գիտական աստիճան ու կոչում ունեցող ՀՀ և օտարերկրյա հրավիրյալ մասնագետը կամ համապատասխան մասնագիտական ոլորտի (պետական կամ մասնավոր) աշխատաշուկայի ներկայացուցիչը:

13. Գիտական ղեկավարի պարտականություններն են.

1) խորհրդատվություն թեզի պատրաստման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) և դրա իրականացման վերաբերյալ,

2) թեմային առնչվող գիտական աղբյուրների ընտրության և օգտագործման վերաբերյալ առաջարկություններ,

3) խորհրդատվություն՝ տվյալների հավաքագրման և հետազոտության պլանի մշակման վերաբերյալ,

4) թեզի կատարման ժամանակացույցի և ուսանողի կատարած աշխատանքների ընթացքի վերահսկում էլեկտրոնային հարթակում (e-learning),

5) ամբիոնի նիստերում թեզի իրականացման ընթացքի և ժամկետների պահպանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում (ըստ կիսամյակների),

6) խորհրդատվություն՝ ելույթի պատրաստման և պաշտպանության վերաբերյալ,

7) տեղեկատվության տրամադրում՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,

8) թեզի վերաբերյալ «Գիտական ղեկավարի կարծիքի» ներկայացում (տե՛ս Հավելված 3),

9) հետազոտական էթիկայի չափորոշիչների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

IV. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Մագիստրոսական թեզը պատրաստող ուսանողն ատեստավորվում է համապատասխան կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից սահմանված ժամկետներում (տե՛ս Հավելված 5 և 6):

16. Ատեստավորումն իրականացվում է ուսանողի կողմից թեզի պատրաստման ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ էլեկտրոնային հարթակ (e-learning) վերբեռնված հաշվետվության հիման վրա:

17. Էլեկտրոնային հարթակում ուսանողի կողմից հաշվետվության ներկայացման վերահսկողությունն իրականացնում է գիտական ղեկավարը՝ յուրաքանչյուր կիսամյակ համապատասխան նշում կատարելով:

18. Ատեստավորումը չանցած (սույն կարգով ներկայացված պահանջները չկատարած ու սահմանված ժամկետներում հաշվետվությունը չներկայացրած) ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով:

V. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

19. Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքն ու ներկայացվող պահանջները

Կառուցվածքը	Ներկայացվող պահանջները
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը լրացվում է՝ համաձայն Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի:
Ստորագրությունների էջ	Մագիստրոսական թեզի տիտղոսաթերթին հաջորդող էջում ստորագրում են ուսանողը, գիտական ղեկավարն ու ամբիոնի վարիչը (տե՛ս Հավելված 2):
Համառոտագիր	Տրվում են թեզի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումները, իսկ նպատակն ու ստացված արդյունքները ներկայացվում են միայն հայերեն (0,5-1 էջ):
Բովանդակություն	Ըստ հերթականության՝ ներկայացվում են թեզի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները, որոնք կցվում են թեզին:
Ներածություն	Ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, վարկածը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական և/կամ կիրառական նշանակությունը:
Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից ու ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության ու ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների ու կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումն ու վերլուծությունը, մեկնաբանություն-

	ներ և ամփոփում:
Եզրակացություններ և առաջարկություններ	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի նշանակալի արդյունքները: Կարող են ներկայացվել նաև առաջարկություններ:
Օգտագործված գրականության ցանկ	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է թեզը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված:
Հավելվածներ	Առկայության դեպքում կցվում են թեզին:

VI. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

20. Մագիստրոսական թեզը պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր (կազմված) ու էլեկտրոնային տարբերակով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Վերնագրերն ու տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) ու գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Թեզի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 4-րդ էջ:

21. Աշխատանքում առկա աղյուսակները, նկարները, գծապատկերներն ու հավելվածները համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակությունների բացատրությունները գրվում են դրանց ներքևում՝ մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

22. Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկն ըստ այբբենական կարգի՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն և այլ լեզուներով հաջորդականությամբ: Ցանկում գրականությունը ներկայացվում է բնագրի լեզվով: Գրականության առանձին աղբյուրի ձևավորումն իրականացվում է ընդունված գիտական հրատարակությունների համար սահմանված մատենագիտական պահանջներին համապատասխան: Ամսագրային հոդվածների համար նշվում են հեղինակ(ներ)ի ազգանունն ու անվան սկզբնատառերը՝ բնագրային տառադարձությամբ, հոդվածի վերնագիրը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակության տարեթիվը, հատորը, համարը (volume, issue) թիվը, էջերը, doi (եթե առկա է): Օրինակ՝ Desai D.A. , Lavelle M., Long-term complications of COVID-19, Am J Physiol Cell Physiol. 2022, 322(1): pp. 1-11. doi: 10.1152/ajpcell.00375.2021): Գրքերի համար նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ն ու անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև՝ գրքի ամբողջական կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթացման ամսաթիվը (օրինակ՝ … // URL: http://www.info..., 14.06.2020):

Արհեստական բանականության տարբեր համակարգերից օգտվելիս (օր.՝ ChatGPT) անհրաժեշտ է նշել համապատասխան հղումը՝ հետևյալ սկզբունքով՝ հարթակը, ամսաթիվը (կիրառված տարբերակի (version) տարեթիվը), վերնագիրն ու սկզբնաղբյուրը (օրինակ՝ OpenAI. (2023). *ChatGPT* (Mar 14 version) [Large language model]. https://chat.openai.com/chat):

23. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]) կամ նշելով հեղինակի ազգանունն ու հրատարակման տարեթիվը (Պողոսյան, 2015; Պետրոսյան և այլք, 2010), նաև տողատակում, ինչպես ներկայացվում է օրինակում[1]:

24. Մագիստրոսական թեզի շարադրանքի նվազագույն ու առավելագույն ծավալները սահմանում են ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդները՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից:

VII. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՐԱԽՈՍՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

25. Մագիստրոսական թեզի պատրաստումն ու պաշտպանությունն իրականացվում են համաձայն ԵՊՀ առկա ու հեռակա ուսուցման համակարգերի համար սահմանված ժամանակացույցների (տե՛ս Հավելված 5 և 6):

26. Մագիստրոսական թեզ պատրաստող ուսանողին հրապարակային պաշտպանությանը նախապատրաստելու և վերջնական դիտարկումներ ու առաջարկություններ կատարելու նպատակով պաշտպանությունից 2 շաբաթ առաջ մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանման կողմից կազմակերպվում է մագիստրոսական թեզի նախապաշտպանություն՝ ամբիոնի վարիչի, մագիստրոսական ծրագրերի ղեկավարների, ինչպես նաև ուսանողի գիտական ղեկավարի մասնակցությամբ:

27. Նախապաշտպանության ընթացքում հանձնաժողովը լսում է ուսանողի ելույթը կատարված հետազոտության, օգտագործված գրականության և ստացված գիտական արդյունքի վերաբերյալ: Հանձնաժողովը կարող է ուղղորդել ուսանողին ելույթի կառուցվածքի և տրամադրված ժամանակն արդյունավետ օգտագործելու հարցում, ինչպես նաև խորհրդատվություն տրամադրել թեզի բովանդակության և կիրառված մեթոդաբանության վերաբերյալ:

28. Հանձնաժողովը քննարկում է մագիստրոսական թեզը, գիտական ղեկավարի բացասական կամ դրական կարծիքը և ուսանողի կողմից աշխատանքի ներկայացման արդյունքում կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության թույլատրելու մասին,

2) մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության չթույլատրելու մասին, եթե այն չի համապատասխանում սահմանված պահանջներին, կամ հայտնաբերվել է ակադեմիական ազնվության նորմերի խախտում,

3) մագիստրոսական թեզը լրամշակելու նպատակով լրացուցիչ ժամանակ տրամադրելու վերաբերյալ (ոչ ավել, քան մեկ շաբաթ):

29. Ուսումնական ստորաբաժանումը կազմում է նախապաշտպանության հանձնաժողովի որոշման վերաբերյալ արձանագրություն:

---

[1] Ասլանյան Լ., Ալավերդյան Ռ., Լույսի բևեռացումը և նրա հետազոտումը, ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 53:

30. Նախապաշտպանության հանձնաժողովի կողմից աշխատանքը պաշտպանության թույլատրելու դեպքում ուսումնական ստորաբաժանումը կազմակերպում է մագիստրոսական թեզի արտաքին գրախոսումը, որը ուսումնական ստորաբաժանման որոշմամբ կարող է իրականացվել նաև «կույր» գրախոսման ձևաչափով:

31. Նախապաշտպանության արդյունքում պաշտպանությանը չթույլատրված կամ նախապաշտպանությանը չներկայացած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով:

32. Մագիստրոսական թեզի արտաքին գրախոսումը կարող են իրականացնել ՀՀ և այլ բուհերի կամ կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գիտական աստիճան ունեցող դասավանդողները, ինչպես նաև տարբեր հաստատությունների համապատասխան մասնագետները:

33. Գրախոսների կազմն առաջարկվում է ուսումնական ստորաբաժանման կողմից և ներբեռնվում էլեկտրոնային համակարգ (SuperVision):

34. Գրախոսը սահմանված ժամկետում իր կարծիքը (տե՛ս Հավելված 4, 5 և 6) ներկայացնում է ուսումնական ստորաբաժանում:

35. Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

36. Մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված ուսանողը կարող է պաշտպանել թեզը (նոր կամ նախկինում հաստատված թեմայով) հաջորդ ուսումնական տարիներին:

37. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունը ձայնագրվում է, և ձայնագրությունը պահպանվում է առնվազն 24 ժամ:

38. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի:

VIII. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

39. Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 20-միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների (տե՛ս Աղյուսակ 2):

40. Մագիստրոսական թեզի գնահատականը ենթակա է բողոքարկման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում:

41. Մագիստրոսական թեզի գնահատման արդյունքները հայտարարվում են պաշտպանության օրը: Հրապարակումից հետո մեկ ժամվա ընթացքում ուսանողը հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել գրավոր բողոք, որը քննարկվում է նույն օրը հանձնաժողովի նիստում:

42. Բողոքարկմանն անհրաժեշտության դեպքում կարող է մասնակցել հաստատության վարչական անձնակազմի (ուսումնական ստորաբաժանման ղեկավար, ուսումնամեթոդական ստորաբաժանման ներկայացուցիչ)՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը:

43. Ուսանողի ներկայությամբ հանձնաժողովը լսում է պաշտպանության ձայնագրությունն ու ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1) գնահատականը թողնել անփոփոխ,

2) գնահատականը բարձրացնել,

3) գնահատականը իջեցնել:

44. Բողոքարկման հանձնաժողովը կայացված որոշման վերաբերյալ կազմում է լրացուցիչ արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի բոլոր ներկա անդամները:

45. Բողոքարկումից հետո ամրագրված գնահատականը փոփոխման ենթակա չէ:

IX. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

46. Սույն կարգը տարածվում է 2023-2024 ուսումնական տարվանից և դրանից հետո ԵՊՀ ընդունված կամ ուսանողական իրավունքները վերականգնած, տեղափոխված ուսանողների վրա:

47. Սույն կարգի 16-17-րդ կետերի դրույթները (էլեկտրոնային հարթակում (e-learning) վերբեռնման մասով) չեն տարածվում 2023-2024 ուսումնական տարում ընդունված և 1 տարի (60ECTS) ուսման տևողություն ունեցող կրթական ծրագրերով սովորող ուսանողների վրա:

<u>Աղյուսակ 2.</u> Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչներն ու հատկացվող միավորները

Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն

_____

Թեզի թեման

_____

Հանձնաժողովի անդամ՝ գիտ. աստ., կոչում, ազգանուն, անուն

_____

Գնահատման չափանիշ/ առավելագույն միավոր	Չափորոշիչ	Հատկացվող միավոր	Ընդհանուր միավոր
Աշխատանքի արդիականության հիմնավորումն ու մասնագիտական գրականության վերլուծությունը *Առավելագույնը՝ 2 միավոր*	1.1. Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը:	□ - 1 □ - 0	
	1.2. Կատարված են թեմային առնչվող անհրաժեշտ գրականության վերլուծությունն ու ամփոփումը:	□ - 1 □ - 0	
Հետազոտության իրականացումն ու արդյունքները *Առավելագույն միավորը՝ 8*	2.1. Աշխատանքի օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, վարկածը ճիշտ են ձևակերպված և համապատասխանում են թեմային:	□ - 2 □ - 1 □ - 0	
	2.2. Ընտրված մեթոդները համապատասխանում են աշխատանքի նպատակին ու խնդիրներին:	□ - 2 □ - 1 □ - 0	
	2.3. Ստացված արդյունքներն ու դրանց վերլուծությունը հիմնավորված են, արված են համապատասխան եզրակացություններ:	□ - 2 □ - 1 □ - 0	
	2.4. Աշխատանքում առկա է նորույթ, արված են տեսական ու կիրառական բնույթի նորարարական առաջարկներ:	□ - 2 □ - 1 □ - 0	

Աշխատանքի շարադրումը և ձևավորումը *Առավելագույն միավորը՝ 2*	3.1. Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Թեզի գլուխների ու ենթագլուխների բաժանումն ու անվանումները համապատասխանում են բովանդակությանը:	☐ - 1 ☐ - 0	
	3.2. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Առկա են հետազոտությունն ու արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն):	☐ - 1 ☐ - 0	
Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը *Առավելագույնը՝ 8 միավոր*	4.1. Զեկույցում (ցուցադրության մեջ) հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, վարկածը, նպատակը, խնդիրներն ու մեթոդները: Ներկայացվում են աշխատանքի բովանդակությունը, արդյունքներն ու եզրակացությունները:	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	4.2. Զեկույցը հստակ է ու հետևողական, զեկուցողը կարողանում է ներկայացնել և բացատրել կատարված հետազոտական աշխատանքը, հիմնավորել արդյունքները:	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	4.3. Հարցերին ու դիտողություններին (այդ թվում՝ գրախոսի կողմից ներկայացված) զեկուցողը տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ:	☐ - 4 ☐ - 3 ☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
Արդյունարար առավելագույն միավորը՝ 20			

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ *[18 pt, Bold]*

_____ ՖԱԿՈՒԼՏԵՏ/ԿԵՆՏՐՈՆ/ԻՆՍՏԻՏՈՒՏ *[18 pt, Bold]*

_____ ԱՄԲԻՈՆ *[16 pt, Bold]*

_____ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ *[18 pt, Bold]*

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ *[18 pt, Bold]*

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ *[18 pt, Bold]*

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ *[16 pt, Bold]*

«_____ » մասնագիտությամբ

_____ մագիստրոսի որակավորման

աստիճանի հայցման համար [14, Bold, Italic]

ԵՐԵՎԱՆ 2024 *[13 pt, Bold]*

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Ուսանող՝ _____ *[13 pt, Bold, Italic]*

ստորագրություն

ազգանուն, անուն

Գիտական ղեկավար՝ _____ *[13 pt, Bold, Italic]*

ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ *[13 pt, Bold, Italic]*

ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«_____»_____20___թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ մագիստրատուրայի ուսանող(ուհի)

_____-ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

_____

(թեմայի անվանումը)

մագիստրոսական թեզի վերաբերյալ

1. Աշխատանքի արդիականությունն ու կարևորությունը

_____

_____

_____

2. Ուսանողի՝ ինքնուրույն հետազոտություն կատարելու, տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը

_____

_____

_____

3. Աշխատանքում նորույթ պարունակող տարրերի առկայությունը

_____

_____

_____

4. Կատարված աշխատանքի դրական կողմերն ու թերությունները

_____

_____

_____

5. Թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին

_____

_____

6. E-learning էլեկտրոնային հարթակում թեզի կատարման ընթացքն ու ժամկետների պահպանումը

_____

_____

Եզրակացություն՝ (բացասական կամ դրական) սահմանված պահանջներին մագիստրոսական թեզի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

_____

_____

_____

Գիտական ղեկավար՝

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

_____

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«____»_____20___թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ մագիստրատուրայի ուսանող(ուհի)

_____-ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

_____

(թեմայի անվանումը)

մագիստրոսական թեզի վերաբերյալ[2]

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումն ու գրականության վերլուծությունը

_____

_____

_____

2. Հետազոտության իրականացումն ու արդյունքները

_____

_____

_____

3. Աշխատանքի շարադրումն ու ձևավորումը

_____

_____

_____

[2] Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի մագիստրոսական թեզի՝ սույն կարգում սահմանված գնահատման չափանիշներին:

Դիտողություններ

_____

_____

_____

Եզրակացություն (Աշխատանքը բավարարում է/չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի շնորհմանը:)

_____

_____

Գրախոս՝

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

_____

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«____»_____20___թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 5.

Մագիստրոսական թեզի պատրաստման, ատեստավորման ու պաշտպանության ժամանակացույց
(առկա ուսուցմամբ՝ ըստ ուսման տևողության)

№	Գործողություն	Վերջնաժամկետ		
		1 տարի	1,5 տարի	2 տարի
1.	Մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն ու հաստատում Գիտական ղեկավարի նշանակում Տվյալների մուտքագրում էլեկտրոնային համակարգեր (SV և e-learning)	1-ին կիսամյակ՝ Հոկտեմբեր	1-ին կիսամյակի Ավարտ	1-ին կիսամյակի ավարտ
2.	Թեզի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում Հետազոտության պլանի մշակում Հետազոտության մեթոդների ընտրություն Գրականության վերլուծություն/մշակում Վերոնշյալ գործողությունների վերաբերյալ հաշվետվության մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning)՝ ատեստավորման համար	1-ին կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ
3.	Թեզի հետազոտական մասի կատարում Վերոնշյալ գործողության վերաբերյալ հաշվետվության մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning)՝ ատեստավորման համար Ուսանողի կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ հաղորդում գիտական սեմինարների ընթացքում	1-ին կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ	3-րդ կիսամյակի ավարտ
	Հետազոտության արդյունքների ամփոփում	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ

4.	Թեզի հանձնում ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանում	պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ	պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ	պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ
5.	Գիտական ղեկավարի կարծիքի ներկայացում ուսումնական ստորաբաժանում Ուսանողի կողմից գիտական ղեկավարի կարծիքի մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning) Թեզի նախապաշտպանություն՝ էական դիտողություն-ների առկայության դեպքում մեկ շաբաթվա ընթացքում աշխատանքի լրամշակում	2-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ	3-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ	4-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ
6.	Մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում Նախապաշտպանությունից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի ներկայացում արտաքին գրախոսին Գրախոսի տվյալների մուտքագրում էլեկտրոնային համակարգ (SV) Գրախոսի կարծիքի ներկայացում ուսումնական ստորաբաժանում պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ Ուսանողի կողմից գրախոսի կարծիքի մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning)	2-րդ կիսամյակի ավարտ	3-րդ կիսամյակի ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ
7.	Ավարտուն աշխատանքի վերբեռնում էլեկտրոնային հարթակ (e-learning)	2-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ	3-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ	4-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ
8.	Թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում	2-րդ կիսամյակի ավարտ	3-րդ կիսամյակի Ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ

ՀԱՎԵԼՎԱԾ 6.

Մագիստրոսական թեզի պատրաստման, ատեստավորման ու պաշտպանության ժամանակացույց
(հեռակա ուսուցմամբ՝ ըստ ուսման տևողության)

№	Գործողություն	Վերջնաժամկետ		
		1,5 տարի	2 տարի	2,5 տարի
1.	Մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն ու հաստատում Գիտական ղեկավարի նշանակում Տվյալների մուտքագրում էլեկտրոնային համակարգեր (SV և e-learning)	1-ին կիսամյակի ավարտ	1-ին կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ
2.	Թեզի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում Հետազոտության պլանի մշակում Հետազոտության մեթոդների ընտրություն Գրականության վերլուծություն/մշակում Վերոնշյալ գործողությունների վերաբերյալ հաշվետվության մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning)՝ ատեստավորման համար	2-րդ կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ	3-րդ կիսամյակի ավարտ
3.	Թեզի հետազոտական մասի կատարում Վերոնշյալ գործողության վերաբերյալ հաշվետվության մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning)՝ ատեստավորման համար Ուսանողի կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ հաղորդում գիտական սեմինարների ընթացքում	2-րդ կիսամյակի ավարտ	3-րդ կիսամյակի ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ
4.	Հետազոտության արդյունքների ամփոփում Թեզի հանձնում ծրագիրն իրականացնող	3-րդ կիսամյակ պաշտպանությունից	4-րդ կիսամյակ պաշտպանությունից	5-րդ կիսամյակ պաշտպանությունից

	ուսումնական ստորաբաժանում	առնվազն 4 շաբաթ առաջ	առնվազն 4 շաբաթ առաջ	առնվազն 4 շաբաթ առաջ
5.	Գիտական ղեկավարի կարծիքի ներկայացում ուսումնական ստորաբաժանում Ուսանողի կողմից գիտական ղեկավարի կարծիքի մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning) Թեզի նախապաշտպանություն, էական դիտողու-թյունների առկայության դեպքում՝ մեկ շաբաթվա ընթացքում աշխատանքի լրամշակում	3-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ	4-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ	5-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ
6.	Մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխա-տանքի արտաքին գրախոսության կազմակերպում Նախապաշտպանությունից հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, աշխատանքի ներկայացում արտաքին գրախոսին Գրախոսի տվյալների մուտքագրում էլեկտրոնային համակարգ (SV) Գրախոսի կարծիքի ներկայացում ուսումնական ստորաբաժանում պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ Ուսանողի կողմից գրախոսի կարծիքի մուտքագրում էլեկտրոնային հարթակ (e-learning)	3-րդ կիսամյակի ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ	5-րդ կիսամյակի ավարտ
7.	Ավարտուն աշխատանքի վերբեռնում էլեկտրոնային հարթակ (e-learning)	3-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ	4-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ	5-րդ կիսամյակ պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ
8.	Թեզի հրապարակային պաշտպանություն ամ-փոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում	3-րդ կիսամյակի ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ	5-րդ կիսամյակի ավարտ

ՀԱՎԵԼՎԱԾ 7.

ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

1. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը միևնույն ուսումնական տևողություն ունեցող կրթական ծրագրերում (տարբեր ուսումնական ստորաբաժանումներ) սովորող երկու ուսանողի կողմից երկու գիտական ղեկավարի ընդհանուր ղեկավարությամբ իրականացվող հետազոտական աշխատանք է:
2. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը հետազոտական ու կիրառական նշանակություն ունեցող աշխատանք է, որն արտացոլում է տարբեր մասնագիտական ոլորտներում ուսանողների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառելու և միջմասնագիտական ինքնուրույն հետազոտություն կատարելու հմտությունները:
3. Միջմասնագիտական մագիստրոսական թեզի թեման հաստատվում է տվյալ ծրագրերն իրականացնող ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում և ներկայացվում է Ուսումնամեթոդական վարչություն՝ հրամանագրման:
4. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը նախքան նախապաշտպանությունն անցնում է փորձաքննություն միջամբիոնային հանձնաժողովում, որի հիման վրա հանձնաժողովը տրամադրում է եզրակացություն:
5. Միջմասնագիտական մագիստրոսական թեզի նախապաշտպանությունն ու հրապարակային պաշտպանությունն իրականացվում են երկու տարբեր ուսումնական ստորաբաժանմանումների մասնագիտական հանձնաժողովների նիստերում: Նախապաշտպանության ժամանակ յուրաքանչյուր հանձնաժողովին ներկայացվում են միջամբիոնային հանձնախմբի եզրակացությունն ու երկու գիտական ղեկավարների կարծիքները:
6. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը ենթակա է արտաքին գրախոսման: Նախապաշտպանությունից հետո ուսումնական ստորաբաժանումները միջմասնագիտական թեզը ներկայացնում են արտաքին գրախոսման՝ կցելով միջամբիոնային հանձնաժողովի եզրակացությունը, նախապաշտպանություններից հետո համապատասխան հանձնաժողովների կողմից տրված ուղեկցող նամակները՝ թեզի միջմասնագիտական կարգավիճակ ունենալու վերաբերյալ, և երկու գիտական ղեկավարի կարծիքները:
7. Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի պաշտպանությունն իրականացվում է՝ համաձայն սույն կարգի պահանջների: